Հաստատում եմ, ՄԽՆ 31.08.2022թ.
Դպրոցի տնօրեն՝ Վ.Մելքոնյան

Դասղեկի աշխատանքային տարեկան ծրագիր
Քաղսիի միջնակարգ դպրոց
5-րդ դասարան
Դասղեկ՝ Տաթևիկ Պողոսյան
2022-2023 ուստարի

Ինչ-որ բնագավառում մասնագետ լինելուց առաջ կարողացիր ՄԱՐԴ լինել, քանզի ամենադժվար մասնագիտությունը ՄԱՐԴ լինելն է:

Դասարանի ընդհանուր բնութագիրը
5-րդ դասարանը բաղկացած է 28 աշակերտից՝19 տղա և 9 աղջիկ:
Դասարանում կան առաջադեմ և աշխատասեր աշակերտներ:
Դասարանում տիրում է բարոյահոգեբանական դրական մթնոլորտ, աշակերտները համախմբված են:

Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուստարվա ընթացքում

- Աշակերտների մոտ զարգացնել մարդկային լավագույն հատկանիշներ՝պատասխանատվություն, հայրենասիրություն, ազնվություն, սեր ուսման և աշխատանքի նկատմամբ:
- Ամենօրյա հսկողություն սահմանել յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ (հաճախում,կարգապահություն,առաջադիմություն):
- Հետևել աշակերտների և դասարանի սանիտարահիգենիկ պայմաններին:

Գեղագիտական դաստիարակություն

- Զարգացնել գեղագիտական ճաշակ՝խոսքի,հագնվելու,սեր բնության,շրջապատի նկատմամբ:
- Լսել աշակերտի կարծիքը գեղեցիկի վերաբերյալ:
- Կազմակերպել այց պատմամշակութային օջախներ,սովորեցնել գնահատել և պահպանել պատմամշակույթին կոթողները:
- Ամրապնդել բնություն-մարդ- արվեստ կապը:

Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

- Դաստիարակել բարի,ազնիվ,հայրենասեր քաղաքացիներ,սերմանել սեր հայրենիքի նկատմամբ:
- Ծանոթացնել հայ ժողովրդի անցյալին ու ներկային,նշել ազգային հերոսների այն գծերը,որտեղ արտահայտված է հայրենասիրությունը:
- Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը,որտեղ ակներև է հայրենասիրությունը:
- Հարգանք ձևավորել հայրենի հողի և երկրի նկատմամբ:
- Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն:

Աշխատանքային դաստիարակություն

- Աշակերտներին սովորեցնել հետևել դասարանի մաքրությանը,խնամել ծաղիկները:
- Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը:
- Սովորեցնել ցանկացած գործի հանդեպ ցուցաբերել մեծ պատասխանատվություն:
- Տալ աշակերտներին այն գաղափարը ,որ կարողանան հաղթահարել ցանկացած անելանելի իրավիճակ:

Բնապահպանական դաստիարակություն

- Զրույցների միջոցով զարգացնել այն գաղափարը, որ Երկիր մոլորակը մեր տունն է և ունի խնամքի կարիք:
- Զրույցներ վարել բնապահպանական խնդիրների մասին:
- Ձևավորել հոգատար վերաբերմունք բույսերի և կենդանիների նկատմամբ:
- Կազմակերպել շրջակա միջավայրի մաքրություն:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարող
1. Զրույց «Գիտելիքի օր» թեմայով	Դասղեկ
2. Զրույց «Հաղթանակած Հայաստան»	Դասղեկ
3. Զրույց «Ներդաշնակություն և խաղաղություն»	Դասղեկ
4. Շնորհավո՛ր, տոնդ ,սիրելի՛ ուսուցիչ	Դասղեկ
5. Զրույց «Ինչ է ընկերությունը և ով է իսկական ընկերը»	Դասղեկ
6. Հայաստանը մշակույթի կենտրոն	Դասղեկ
7. Իմ երազների քաղաքը կամ երկիրը	Դասղեկ
8. Զրույց «Հայկական և անգլիական ավանդույթները»	Դասղեկ
9. Զրույց «Ինչպիսին է աշխարհն իմ պատուհանից»	Դասղեկ
10. Զրույց «Ձմռան վրձինը»	Դասղեկ
11. Զրույց-քննարկում «Ես տանը,դպրոցում,ընկերական շրջապատում»	Դասղեկ
12. Զրույց «Իմ գրական հերոսը»	Դասղեկ
13. Զրույց «Ինչպես են նշում Ամանորը Հայաստանում և տարբեր երկրներում»	Դասղեկ
14. Զրույց «Հայոց բանակ»	Դասղեկ
15. Զրույց «Ազնիվ և անկեղծ հարաբերություններ դպրոցում»	Դասղեկ
16. Զրույց նվիրված «Տյառնընդառաջ» տոնին	Դասղեկ
17. Թումանյանական շաբաթ։ Գրքի դերը մեր կյանքում	Դասղեկ
18. Զրույց «Ինչ է պատասխանատվությունը»	Դասղեկ
19. Զրույց «Գարուն,նոր կյանքի սկիզբ»	Դասղեկ
20. Զրույց «Մայրություն և գեղեցկություն»	Դասղեկ
21. Զրույց «Ում կուզեի նմանվել»	Դասղեկ
22. Զրույց «Իմ նախընտրած գիրքը»	Դասղեկ
23. Զրույց «Սուրբ Զատիկ»	Դասղեկ
24. Զրույց «Իմ հերոսը»	Դասղեկ
25. Զրույց «Բարությունը կփրկի աշխարհը»	Դասղեկ
26. Զրույց նվիրված Ապրիլի 24-ին	Դասղեկ
27. Զրույց «Ոչ ոք չի մոռացվել,ոչինչ չի մոռացվել»	Դասղեկ
28. Զրույց «Պատմական կերպարների մասին»	Դասղեկ
29. Զրույց «Ինչն է համարվում գեղեցիկ»	Դասղեկ
30. Զրույց «Իմ կատարած լավ արարքները»	Դասղեկ
31. Զրույց «Մեր վաղվա ապագան կերտողները դուք եք»	Դասղեկ
32. Զրույց «Որտեղ կցանկանայի ապրել և ինչու»	Դասղեկ
33. Զրույց «Երկրորդ կիսամյակի իմ ձեռքբերումները»	Դասղեկ
34. Տարեվերջյան էքսկուրսիա	Դասղեկ
Դասղեկի ժամ օր՝ուրբաթ դասաժամ՝6 -րդ	